ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սննդամթերքի անվտանգության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամաններով, այլ իրավական ակտերով, Նախարարության և սույն կանոնադրություններով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրն է՝

1) իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը,

2) Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների քաղաքականության զարգացումը,

6. Վարչության նպատակն է՝

1) լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանն ուղղված հանրապետության սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը,

2) պետական միասնական քաղաքականության ձևավորումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են՝

1) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների քաղաքականության մշակում,

2) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի մշակում, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակում,

3) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում կատարված վերլուծությունների և կանխատեսումների հիման վրա հայեցակարգերի և զարգացման ծրագրերի մշակում,

4) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում իրականացվող ծրագրերի համակարգում,

5) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի), մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցություն,

6) Հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում և ներկայացում,

7) Անասնաբուժության ոլորտին առնչվող անասնահակահամաճարակային միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակում,

8) Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակում,

9) Դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի վերլուծության իրականացում և հիվանդությունների օջախների վերացման համալիր միջոցառումների պլանի մշակում,

10) Հայաստանի Հանրապետությունում իրականացվող անասնահակահամաճարակային միջոցառումների, կենդանիների, կենդանիներից մարդկանց փոխանցվող հատուկ վտանգավոր, կարանտինային հիվանդությունների արձանագրման դեպքում աշխատանքների կազմակերպում և իրականացում,

11) Պետական աջակցությամբ իրականացվող անասնահակահամաճարակային միջոցառումների, դրանց իրագործման համար անհրաժեշտ գույքի, պարագաների և պատվաստանյութերի չափաքանակների ճշգրտման, ձեռքբերման և բաշխման գործընթացների կազմակերպում և իրականացում,

12) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկերի կառավարում և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,

13) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներին առնչվող ստանդարտների և այլ իրավական (նորմատեխնիկական) փաստաթղթերի նախագծերի մշակմանն աջակցում,

14) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման, վերլուծության, գնահատման իրականացում, ըստ անհրաժեշտության առաջարկությունների ներկայացում,

15) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում,

16) Բույսերի պաշտպանության նպատակային ծրագրերի մշակում,

17) Բույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկում,

18) Հետազոտությունների, մշտադիտարկումների միջոցով հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների՝ մկնանման կրծողների, մորեխների, ինչպես նաև բազմամյա տնկարկների, բանջարաբոստանային և հացահատիկային մշակաբույսերի հիմնական վնասատուների ու հիվանդությունների հայտնաբերման, հաշվառման, տարածման արեալի և վնասակարության տնտեսական շեմերի ճշտման վերաբերյալ տեղեկատվության ստացում, վերլուծություն, գնահատում, տեղեկատվության փոխանակում, առաջարկությունների ներկայացում,

19) Գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոքիմիական վիճակի հետազոտման և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ստացում, առաջարկությունների ներկայացում,

20) Բուսասանիտարիայի ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

21) Պետական աջակցությամբ իրականացվող բույսերի վնասատուների, ինչպես նաև հիվանդությունների դեմ պայքար կազմակերպելու նպատակով բույսերի պաշտպանության միջոցների չափաքանակների ճշգրտման, ձեռքբերման և բաշխման գործընթացներին մասնակցություն,

22) Բույսերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներին մասնակցություն,

23) Կառավարման մարմիններին սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներին առնչվող փաստաթղթերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրում,

24) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտները կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին ըստ անհրաժեշտության պարզաբանումների և խորհրդատվության տրամադրում և մասնակցություն,

25) Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ԵԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, իրականացվող աշխատանքների համակարգման ապահովում,

26) Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներին վերաբերող հանդիպումներին, խորհդակցություններին, սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին մասնակցության ապահովում,

27) Քաղաքացիների նամակների և դիմում բողոքների քննարկում և իրավասության սահմաններում բարձացված հարցերի լուծման ապահովում,

28) Նախարարի հրամաններով, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի հանձնարարականներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բխող այլ լիազորությունների իրականացում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից՝

1) Սննդամթերքի անվտանգության բաժին,

2) Անասնաբուժության բաժին,

3) Բուսասանիտարիայի բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Սննդամթերքի անվտանգության բաժնի գործառույթներն են.

1) Սննդամթերքի անվտանգության բնագավառում քաղաքականության մշակում,

2) Սննդամթերքի անվտանգության բնագավառին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի մշակում, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակում,

3) Սննդամթերքի անվտանգության ապահովման իրավիճակի ուսումնասիրություն և վերլուծություն, խնդիրների բացահայտում,

4) Սննդամթերքի անվտանգության ոլորտում կատարված վերլուծությունների և կանխատեսումների հիման վրա հայեցակարգերի և զարգացման ծրագրերի մշակում,

5) Սննդամթերքի անվտանգության ոլորտում իրականացվող ծրագրերի համակարգում,

6) Սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի կառավարում և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,

7) Ոլորտում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման, վերլուծության, գնահատման իրականացում, ըստ անհրաժեշտության առաջարկությունների ներկայացում,

8) Ոլորտում մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում,

9) Կառավարման մարմիններին բնագավառին առնչվող փաստաթղթերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրում,

10) Ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին ըստ անհրաժեշտության պարզաբանումներ և խորհրդատվության տրամադրում և մասնակցություն,

11) Սննդամթերքի անվտանգության ոլորտում ԵԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում,

12) Սննդամթերքի անվտանգության ոլորտին առնչվող միջազգային կազմակերպությունների հետ իրականացվող աշխատանքների համակարգում,

13) Սննդամթերքի անվտանգության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործնթացներին սահմանված կարգով մասնակցություն,

14) Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող սննդամթերքի անվտանգության ոլորտին վերաբերող հանդիպումներին, խորհդակցություններին, սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին մասնակցության ապահովում,

15) Քաղաքացիների նամակների և դիմում-բողոքների քննարկում և իրավասության սահմաններում բարձացված հարցերի լուծման ապահովում,

16) Նախարարի հրամաններով, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի հանձնարարականներով, սույն կանոնադրությամբ բաժնին վերապահված գործառույթներից բխող այլ լիազորությունների իրականացում:

11. Անասնաբուժության բաժնի գործառույթներն են.

1) Անասնաբուժության ոլորտում քաղաքականության մշակում,

2) Անասնաբուժության ոլորտում իրականացվող ծրագրերի համակարգում,

3) Հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում և ներկայացում,

4) Անասնաբուժության ոլորտին առնչվող անասնահակահամաճարակային միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակում,

5) Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակում,

6) Դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի վերլուծության իրականացում և հիվանդությունների օջախների վերացման համալիր միջոցառումների պլանի մշակում,

7) Հայաստանի Հանրապետությունում իրականացվող անասնահակահամաճարակային միջոցառումների, կենդանիների, կենդանիներից մարդկանց փոխանցվող հատուկ

վտանգավոր, կարանտինային հիվանդությունների արձանագրման դեպքում աշխատանքների համակարգում և կազմակերպում,

8) Պետական աջակցությամբ իրականացվող անասնահակահամաճարակային միջոցառումների, դրանց իրագործման համար անհրաժեշտ գույքի, պարագաների և պատվաստանյութերի չափաքանակների ճշգրտման, ձեռքբերման և բաշխման գործընթացների կազմակերպում և իրականացում,

9) Անասնաբուժության ոլորտում ռիսկերի կառավարում և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,

10) Ոլորտում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման, վերլուծության, գնահատման իրականացում, ըստ անհրաժեշտության առաջարկությունների ներկայացում,

11) Ոլորտում մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում,

12) Կառավարման համակարգի մարմիններին բնագավառին առնչվող փաստաթղթերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրում,

13) Ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին ըստ անհրաժեշտության պարզաբանումներ և խորհրդատվության տրամադրում և մասնակցություն,

14) Անասնաբուժության ոլորտում ԵԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում,

15) Անասնաբուժության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի), մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցություն,

16) Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող անասնաբուժության ոլորտին վերաբերող հանդիպումներին, խորհդակցություններին, սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին մասնակցության ապահովում,

17) Քաղաքացիների նամակների և դիմում բողոքների քննարկում և իրավասության սահմաններում բարձացված հարցերի լուծման ապահովում,

18) Նախարարի հրամաններով, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի հանձնարարականներով, սույն կանոնադրությամբ բաժնին վերապահված գործառույթներից բխող այլ լիազորությունների իրականացում:

12. Բուսասանիտարիայի բաժնի գործառույթներն են.

1) Բուսասանիտարիայի ոլորտում քաղաքականության մշակում,

2) Բույսերի պաշտպանության նպատակային ծրագրերի մշակում,

3) Բույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկում,

4) Մասնակցություն բուսասանիտարական ռիսկերի կառավարման գործընթացներին,

5) Հետազոտությունների, մշտադիտարկումների միջոցով հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների՝ մկնանման կրծողների, մորեխների, ինչպես նաև բազմամյա տնկարկների, բանջարաբոստանային և հացահատիկային մշակաբույսերի հիմնական վնասատուների ու հիվանդությունների հայտնաբերման, հաշվառման, տարածման արեալի և վնասակարության տնտեսական շեմի վերաբերյալ տեղեկատվության ստացում, վերլուծության իրականացում, գնահատում և ըստ անհրաժեշտության տեղեկատվության փոխանակում, առաջարկությունների ներկայացում,

6) Գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոքիմիական վիճակի հետազոտման և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ստացում, առաջարկությունների ներկայացում,

7) Բուսասանիտարիայի ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

8) Պետական աջակցությամբ իրականացվող բույսերի վնասատուների, ինչպես նաև հիվանդությունների դեմ պայքար կազմակերպելու նպատակով բույսերի պաշտպանության միջոցների չափաքանակների ճշգրտման, ձեռքբերման, բաշխման, ինչպես նաև բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման գործընթացներին մասնակցություն,

9) Բույսերի պաշտպանության, գյուղատնտեսական նշանակության հողերի բերրիության պահպանման միջոցառումներին մասնակցություն,

10) Ոլորտում իրականացվող ծրագրերի, ինչպես նաև իրավական ակտերի մշտադիտարկման, վերլուծության, գնահատման իրականացում, ըստ անհրաժեշտության առաջարկությունների ներկայացում, իրավական ակտերի նախագծերի մշակում,

11) Ոլորտում մասնագիտական գիտելիքների բարձրացման ուղղված ծրագրերի մշակում, համապատասխան մասնագետների ուսուցմանն ու վերապատրաստմանն աջակցություն,

12) Ոլորտում մասնագիտական հանձնաժողովների ձևավորում, տեղեկատվական թերթիկների, հրահանգների, գրքույկների մշակում,

13) Բույսերի պաշտպանության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների, նորագույն տեխնոլոգիաների և առաջավոր փորձի ներդրման կազմակերպում,

14) Կառավարման համակարգի մարմիններին բնագավառին առնչվող փաստաթղթերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրում,

15) Ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտներին ըստ անհրաժեշտության պարզաբանումների և խորհրդատվության տրամադրում և մասնակցություն,

16) Բուսասանիտարիայի ոլորտներում ԵԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում,

17) Բուսասանիտարիայի ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի), մշակման ու քննարկման գործընթացներին՝ սահմանված կարգով մասնակցություն,

18) Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող բուսասանիտարիայի ոլորտին վերաբերող հանդիպումներին, խորհրդակցություններին, սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին մասնակցության ապահովում,

19) Քաղաքացիների նամակների և դիմում բողոքների քննարկում, իրավասության սահմաններում բարձացված հարցերի լուծման ապահովում,

20) Նախարարի հրամաններով, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի հանձնարարականներով, սույն կանոնադրությամբ բաժնին վերապահված գործառույթներից բխող այլ լիազորությունների իրականացում:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

14. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

15. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

16. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

18. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

19. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

20. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: